




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍԵՐԸ*

ԳԵՂԱՐԴ

Դարպասներ

«Որտե՞ղ է եղել»,—իմ մասին հարցնում էին բարեկամիս: Սա թվարկում էր «Պետք է Գեղարդ տանել»—լսելով նրա պատասխանը, միշտ ու անատարկելիորեն ասում էին բոլորը: Այդ միահամոտությունը դավադրություն էր հիշեցնում: Ի՞նչ է Գեղարդը: Որտե՞ղ է Գեղարդը: Ուները թոթվում էին: Ոչ ոք նույնիսկ չէր փորձում բացատրել. ինքը կտեսնես:

Ինձ համար Գեղարդը սոսկ անուն էր, համառ, նույնիսկ աներես մի բառ: Անընդհատ մարսելն ու դիտելը արդեն ձանձրացրել էին:

...Հայկական լայնարձակությունը թիթեռի նման թափահարեց թևերը, թպրտաց և, թե՛ վերը թուլացած թիթեռի նման, խաղաղվեց միանգամից: Հայկական կոկիկ առյուծը գլուխը շրջեց մեզ, բարձրացրեց թաթը, հաս-

կացնելով, որ հասել ենք արդեն: Արտասովոր-կատվատեսք առյուծ էր՝ բրոնզից: Ավելի ուշ, երբ այդպիսի մի առյուծ էլ տեսա հիմնավորց պատի վրա, հասկացա, թե ժամանակակից պրոֆեսիոնալ քանդակագործը որտեղից է վերցրել գծերի այդ հանճարեղ սահմանությունը:

Առյուծը կանգնած էր կիրճի կոկորդիս մի բարձրալաց, գեղեցիկ սլան վրա: Այդ կոկորդիս որքան նեղանում, այնքան ավելի արբնթաց էինք առաջանում նրա միջով, սուրում ու պտտվում, ինչպես ջուրը՝ ձագարի մեջ: Եվ համկարձ թևներս ծալած, սահում թեթևությամբ ընկանք կիրճը:

Ու այդտեղ էլ միանգամից անցավ կշտացածությունը: Իսկական քաղց և տեսողության սարսուռ զգացիմք... Այդ տեղը ինքնին ասես տաճար լիներ. կառուցված էր լայնարձակության մեջ, կառուցված էր լայնարձակությունից: Ինչպես ամեն մի տաճար, սա էլ դուռ ուներ (դարպասի մոտ կանգնած էր առյուծը), և միայն դարպասի ետևից էր երեվում շենքը որպես հառաչանք և շփոթված լեզվի համրություն:

Տեսողությունն այստեղ հնչում էր:

Կիրճի գորշ, կնճոռոտ թշերից, որտեղ քամին կապ էր ընկել, ինչպես երաժշտի շունչը՝ շեփոթի ծվանում, անցնելով նեղ փող-

* «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում ուս արձակագիր Անդրեյ Բիտովի «Հայաստանի դասերը» վերնագիրը կրող ակնարկից ու Գեղարդին նվիրված հատվածը: Ակնարկը թարգմանաբար լույս է տեսել «Սովետական գրականություն» ամսագրում (1970 թ., № 10, էջ 24):

րակի պարույրի միջով և փողաբերանից դուրս պրծնելով, ծնվում էր տեսանելի մի ձայն, որը արտաստվող լայն էր ու միաժամանակ կտր... Մենք ընկել էինք մի աշխարհ, որտեղից վերադարձ չկար, թեև վերադառնալու անհնարինությունը դեռևս չէինք գիտակցել և, հետևապես, դեռևս սարսափ չէինք զգում:

Առաջին մենք հիացմունք էինք շնչում և հիացմունքն էլ մեզնով էր շնչում: Հիացմունք, որը դեռևս թեթևամիտ էր, առանց հատուցման ժամի, տուրիստական...

Չափից, երգչախմբի նման, բարձրանում էին ժայռերը: Ստորոտում՝ ցածր, խիտ ու թավափունչ այդ ժայռերը, լուսավորվելով ու նրբանալով, բարձրանում-վերձգվում էին աստիճան առ աստիճան. հնչում էին նոր, ավելի ու ավելի բարձր ձայներ, և վերևում հողմաճար սլաքներն արդեն իսկ և իսկ երեխաների երգչախումբ էին: Աջից՝ նվագախմբի խնցեփեղկի նման գալարապտույտ ներքև իջնելով, բացվում էր փոսորակի հատակը՝ փողային նվագարանի դեղձան արծաթով, սրնգի նման զանգուր կանաչով, բախագործիքների՝ խոշոր գլաքարերի ու ժայռաքեկորների հանգիստ ու ինքնավրտահ ճակատներով. երկրային հասկանալիություն՝ հնարավոր գործիքների, որոնք մարդկային ձայնի գաղտնաբանում կորչում են, ինչպես մասը՝ մեքենայի մեջ, գիծը՝ դեմքի մեջ, խոփը՝ հողի մեջ, աշխատանքի գործիքներ, որոնք նաև առարկան են այդ նույն աշխատանքի: Գետակի ափից բարակ ծովն էր ելնում, և չորս բոլորը վխտում էին կատարողները. ուխտավորները խորոված էին անում, և արտաստվող կարմիր շրջագգեստը նրանց մեջ աշնան առաջին տերև էր թվում:

Մեր առջև կանգնած էր եկեղեցին՝ վաշել-չաշեն, կուռ և, իհարկե, հազարամյա: Եվ օժանդակ շինվածք էր թվում նա այս բնական տաճարի մեջ և արդեն չէր հուզում: Նրա քարակոփ պատերը՝ ժամանակակից բացգույն ուղղանկյուն կարկատաններով, նրա նորոքյա ցինկապատ տանիքը և սրածողը է՛լ ավելի էին ընդգծում տաճարին կից օժանդակ շենքի այդ տպավորությունը: Եկեղեցին բնավ մեղավոր չէ այդպիսի տպավորությունից թողնելու համար, քանի որ գլուխ-գործոց է բոլոր տեսակետներից, և ոչ ոք, շրջապատի բնությունից բացի, այդ տիտղոսը նրանից չէր խլում:

Բայց նրա թիկունքում բարձրանում էր ժայռերի մի նոր երգչախումբ, և եկեղեցին՝ այդ ուղղաբարձ հնչյունի ստորոտում ծվաբած, սոսկ մեկն էր այդ աստվածային երաժշտության կատարողներից, սոսկ մեկը անցյալի բազմաթիվ և մոռացված վիրտու-

ոզներից: Քանի որ ի՞նչ է կատարողը երաժշտության համեմատությամբ, արարիչ հո չէ, սպասավոր է...

Երկինքն էր այդ տաճարի տանիքը: Դեռելս քիչ առաջ, դարպասների մոտ, երկինքը բաց-կապտավուն էր և հազիվ էր ծածկում լայնարձակությունը, իսկ այստեղ՝ ժայռերի երգչախումբերով պարագծված, խոր և մոտիկ, արտաստվող վառ-կապույտ էր ներկվել:

— Աստված իմ,—բացականչեցինք մենք, դիտելով այդ ամենավերին բարձրակետում քարացած երաժշտությունը, և մեր թիկունքից, թևերի նման, զգալով նրա դիրիժորի ու արարչի կարկառած ձեռքերը՝ հավիտենական, միակ, առաջին կատարումը:—Աստված իմ,—բացականչեցինք մենք, կորցնելով սին ամոթխածությունը տափալության հանդեպ և կորցնելով նաև տափալությունը ամոթխածության հետ մեկտեղ:—Աստված իմ,—բացականչեցինք մենք,—այս ի՞նչ տեղ են ընտրել...

Վ Ե Բ Ե Լ Բ

Այո, այդ տաճարը բնությունն էր կերտել և շատ հասկանալի է, որ նա դարձել է հալածվող վաղ քրիստոնեության միջնաբերդն ու մենաստանը (հայերը քրիստոնեությունն ընդունել են մեզնից շատ առաջ, 4-րդ դարում): Այդ տեղը, որ այնքան անապասելի է Հայաստանում, այնքան նման չէ Հայաստանում եղած որևէ բանի, որ պարզապես չի կարող լինել (բայց քանի որ կա, ապա ուրեմն չի կարող չլինել), ի սկզբանե կառուցված է եղել հատուկ այդ նպատակով, հետո՝ դատարկ, սպասել է իր ժամին, այնուհետև նրա գոյությունը կոահել են առաջին հավատացյալները...

Բայց այդտեղ, ինչպես պարզվեց, դեռևս Գեղարդը չէր: Այսինքն, իհարկե, կրում էր այդ անունը, բայց դա Գեղարդն էր, առանց այդ բառը շեշտելու, դա պարզապես Գեղարդ էր: Այդտեղի հազարամյա եկեղեցին մանավանդ չէր կարող լինել այն Գեղարդը:

...Մենք մագլցում ենք վեր, դեպի հնամյա վիմափորերը, դեպի ժայռի առաջին աստիճանը՝ ստորին խազատողը: Ներս ենք մտնում: Ժամանակը փուլ է գալիս: Սևացած, անողորկ պատերով նեղ քարանձավները հորատանցքեր են հիշեցնում: Նույնիսկ պայթանցքների հետքեր գտա ես՝ նախկին լեռնային ինժեներս: Կոպիտ վիմախորշեր՝ սրբապատկերների համար, փոքրիկ գավեր՝ մատաղի համար, նեղ ճոռիկներ՝ արյան հոսքի համար, առաստաղի հինավուրց, չըկեղտոտող մուր ու նորոքյա խզմզած անուններ՝ տուրիստական արդի դարաշրջանի խորհրդանիշներ, ժամանակակից գույնզգույն

լաթակտորներ՝ մերձավորների բուժման հմայիլներ, արդիական հալված մոմեր՝ այդ քարանձավների շրաքարը: Ինչպիսի համատեությունն և հավատի ինչպիսի փառամեությունն այս քարե աղքատիկ անկյուններում: Ինքը՝ բնությունն է ստեղծել այս տաճարը, իսկ վիմավորները խորաններն են նրա: Բնական համաշարությունների ոչ մի խախտում, ոչ մի միջամտություն բնության այդ վեհ ստեղծագործությանը, ոչ մի մոդեռնացում: Փորձիր ամենացածր ձայնով մի բառ արտասանել և ժայռն իսկույն արձազանքում է, ասես արթնանում է ժայռի մեջ քարացած երաժշտական ամբողջ ներդաշնակությունը: Այստեղ միայն աղոթք կար և պարապ տեղը այստեղ չես գա...

Մենք լույս աշխարհ ենք ելնում, ամաշկոտորեն կկոցելով աչքերս: Դիտում ենք, շոշափում խաչքարերը՝ ժայռափոր խաչերը: Գանգրաֆեր հայկական խաչ... Ինչպե՞ս է նա աստիճանաբար ու գեղեցկորեն ձեռք բերել իր կանոնավոր գծերը: Ոչ մեկը չի կրկնում մյուսի եզրագծերը: Փոփոխվում են համամասնությունները, փափկությունն ու կոշորությունը անէանում, հալվում են և խաչքարերը դառնում են ուղղագիծ, խստաշունչ: Բայց առաջին խաչը ութ թերթանոց ծաղիկ է: Ծաղկաթերթերը զույգ-զույգ մոտենում են իրար, և գծագրվում է երկփեղկված ճյուղերով խաչը: Եվ չես հասկանում ու չգիտես ում հարցնես՝ խա՞չն է առաջացել ծաղկից, թե՞ նկարիչն է այդ խորհրդանշիչը նմանավորել բնությանն ու կյանքին, երկփեղկելով նրա ճյուղերը և այնպես պարագծելով, որ ծաղիկ ստացվի:

Մենք իջնում ենք, անցնում եկեղեցական քարձր պարապի՝ ավելի ուշ շինված արտաքին դարպասով և շարժվում դեպի այդ ամրակուռ, վայելչակերտ եկեղեցին, որ ցիմլե երջանկություն ունի գլխին դրած: Ես անտարբեր ու պարապ դիտում եմ, նայում ուղիղ և ներս չեմ տեսնում: Ոչինչ, մտածում եմ, հիմա ներս կմտնենք:

¹ Այդ վիմավոր տաճարները ազգի պատմության բանալին են: Հայերին ջարդել են որպես «անհավատներին», բայց իրականում նրանց ջարդել են հենց հավատարմություն համար, իրենց երկրին, իրենց լեզվին, Քրիստոսին հավատարիմ լինելու համար: Նրանք կորցրել են իրենց կյանքը, բայց չեն կորցրել հայրենիքը: Եթե, հետևելով ինքնապահպանության բնագիծին, նրանք զիջեին իրենց հավատը, գուցե ավելի քիչ արյուն թափվեր, բայց ազգը կձուլվեր-կըկորչեր: Հայերի համար «Գեղարդ» քաղոք ոչ միայն սուրբ վայրի անուն է, այլև ինչ-որ պատկերավոր հասկացություն: Գեղարդը հավատի պատվար է: «Գեղարդ» քաղով շատ բան կարելի է քացատրել: (Ծանոթ. Ռեշիմակի):

Բայց՝ ոչ, մենք կրկին սկսում ենք վեր մագլցել ժայռին հենված եկեղեցու պատի կողքով:

— Նախ՝ այս կողմ գնանք, — մեղմությամբ և համատրեմ ասում են ինձ:


— Ի՞նչ կա այնտեղ:

— Հիմա կտեսնես:

Օ՛, հիացական պատմություններով կանխակալ տպավորություն չստեղծելու այդ արժանավոր սովորությունը: Ոչ մի անգամ ես կարգին գլխի չեի քնկնում, թե ուր են տանում ինձ և ինչու: Եվ հանդիպումների քերկրանքը չէր մանրացվում նախազգուշացմամբ կամ ազդարարմամբ: Պարզվեց, որ առաջին քրիստոնյաների քարանձավային աղոթատները ես դեռ այն Գեղարդը չեմ:

Այնտեղ ծնված քարձր, բայց կարճատև զգացումը չէր համընկնում քաղաքային խառնաշփոթ ատուցությանը, որ ամուր մտած էր մեր մեջ: Մենք քարձրաձայն խոսում էինք, առանց իրար նայելու: Ինչևէ, մենք չէինք քնկալում մեր երկփեղկվածությունը և սուկ ենթագիտակցաբար ձգտում էինք քաշել, իջեցնել մի ակնթարթով բունը ված զգացումի վստեությունը և ետ քաշելով, մոռացության մատնել: Մեր հալացքը զբաղված էր մանր-մունր բաներով՝ տուրիստի թողած մակագրությունով՝ աներևակայելի քարձուրքի վրա, գեներալ Անդրանիկի լուսանկարները վաճառող ծերուկով, «Զկեղ-տոտեղ» աղքատիկ ցուցանակով, մեղվափեթակներով, որոնք հանկարծ այնքա՛ն գեղեցիկ ու բնական երևացին վանքի հողում... Երկու հոգի աշխատում էին փեթակների մոտ... Մեր զգացմունքը աստիճանաբար մարում էր. գնալով մենք ավելի բնական տեսք էինք ստանում և արտասովոր զգացումի կորուստից հանկարծ միանգամից ասես երեխա դարձանք: Դուրս գալով կամանից, մենք սկսեցինք ժայռն ի վեր մագլցել միանգամայն անհարկի մարգական խանդավառությամբ: Ինչ-որ տեղ մեզ կորցրինք և մեզնից յուրաքանչյուրը, երևի, փոքր-ինչ ամաչում էր մեր շնչակտոր, ծանրամարմին երեխայության համար: Բայց յուրաքանչյուրը՝ առանձին, ոչ թե՛ բոլորս միասին:

Հիմա ահա առաջին անգամ ես հասկանում եմ, թե ինչն է ստիպում տուրիստին ամենաանպատեհ տեղերում խզվել իր անունը, կեղտոտել, երգել և լուսանկարվել, այսպես ասած, փչացնել պատմության և բնության հուշարձանները... Չէ որ քարձր, անհասանելիորեն ու անտանելիորեն քարձր է կանգնած այդ հուշարձանը նրա տգետ հոգու համեմատ: Եվ հանկարծ այդ հոգու մեջ, այդքան անընտել, անկիրթ, նսեմ հոգու մեջ մի պատասխան-զգացմունք է արձագանքում և այդ արձագանքը անհասկանալի է նրան:



Ս. Գեղարդի վանքը

Էլ ի՞նչը կարող է նրան այդքան գլխապտույտ, մահացու (ֆիզիկապես) բարձունքի (ֆիզիկական իմաստով) հասցնել, եթե ոչ զգացմունքների լիակատար խռովքը: Զե որ ներքևում կանգնած աղջկա համար նա բաղաբուն չի բարձրանա պլուների գագաթը, չի մագլցի պատերի վրայով: Կարծում եմ, իսկական փառահեղության և գեղեցկության տեսքը անպատրաստ աչքի համար նույնքան գրգռիչ է, որքան ուժեղ լույսն ու ձայնը և այստեղից էլ բոլոր հակազդեցությունները ըստ Պավլովի...

Բարբարոսներն ինչո՞ւ էին ջարդում:

Ովքեր էինք մենք, եթե ոչ փչացած երեխաներ՝ տաճարների և ժայռերի հատուն ու կատարյալ հասարակության մեջ:

Բայց չէ որ մենք գրողներ ենք և կարող էինք մեզ ավելի պատրաստ համարել՝ կատարյալը ընկալելու... Սակայն՝ ոչ: Վաղուց, շատ վաղուց է, ինչ մենք ձգտում ենք աշխարհին ճշմարտություն ասել աշխարհի մասին, բայց ճշմարտություն չենք ասում ո՛չ մեզ, ո՛չ միմյանց: Եվ այժմ չենք ասում ոչ միայն նրա համար, որ թաքցնում ենք, այլև այն պատճառով, որ արդեն չգիտենք: Մենք մեր անունները չգրեցինք ժայռերի վրա

(հավանաբար այն պատճառով, որ բազմիցս տեսել ենք տպագրված), բայց այդ նույն բանը մեզ մոտ այլ ձևեր ունենեց: Մեր այդ պրոգնոզները, ես նույնիսկ կասեի՝ «նովելիզմը» ջղաձգորեն որոնում էր ամենագետնատարած և ամենաստոր մանրամասներ:

Այսպես, երբ մագլցում էինք, տաճարին դիմահար բնակարանի երկրորդ հարկի պատը շգամբում մենք մի ծեր քահանա տեսանք... Նա սեղանի մոտ նստած գիրք էր նայում: Ինչ-որ աղջիկ, երկրորդ պլանում, սեղան էր գցում, մերթ հայտնվելով, մերթ չքանալով: Ծերունին նստած էր միանգամայն անշարժ և գիրք էր նայում (այո, նայում էր, չէր կարդում. նրա հայացքը ևս, հեռվից աննշմարելի, անշարժ էր): Նա ապշեցնելու չափ գեղեցիկ էր. արծվադեմ էր, բարձր, մաքուր ճակատով, ճերմակահեր, թարմամաշկ, դժգույն, նստած տեղը՝ բարձրահասակ: Ա՛խ, որքան աղքատ են բառերը՝ կանոնիկ, կատարյալ, հնամենի գեղեցկությունը նկարագրելու համար: Գեղեցկության ընդլայնված, արդիական, անտրամաչափ իդեալի մեր դարը այստեղ նոր բառեր չի գտնի: Նա, այդ ծերունին, գեղեցիկ էր ոչ թե արտիստորեն կամ ցուցադրաբար. նա գեղե-

ցիկ էր վեհոքեն, իդեալականորեն, բացարձակորեն, ինչպես ինքը՝ Գեղարդը։ Եվ անշարժ էր, ինչպես այստեղի հազարամյա քարը։ Նա սեղան էր նստել և բացել էր գիրքը, բայց նա այդտեղ նստած էր ընդմիջտ, հավիտյան—հավիտենից (այդպես թվում էր, երբ նայում էիր նրան) և նույնիսկ սեղանը նրա առաջ՝ ուտելիքով ու խմելիքով, ոչ մի կերպ չէր կարող հողեղեն դարձնել նրա կերպարը... Ես և իմ քարեկամը միաժամանակ ու միակերպ տեսանք այդ ծերունուն և դա հասկացանք, բռնելով միմյանց հայացք։ «Ի՞նչ դեմք է» — գռեհկորեն առաջի ես։ «Այո... — առաջ քարեկամս՝ խելացի մի մարդ։ — Ահա ես մտածում եմ, թե ես էլ այդքան գեղեցիկ լինեի, սուրբ կյանք վարեի, այնքան սուրբի, որ իմ մագերես էլ այդպես ներմակեին... կարո՞ղ է՝ ես էլ այդպիսի դեմք ունենամ։ Անհնա՛ր է։ Երբե՛ք»։ Եվ այդ էլ, դարձյալ, մեզ համար չափազանց քարձր էր, որպեսզի այստեղ ամեն ինչ, ամեն, ամեն ինչ, նույնիսկ մարդիկ այսքան գեղեցիկ լինեն... Եվ հանկարծ մեր ընկերներից մեկը, որի մասին ասում են, թե հետաքրքիր պոետ է, նվառ ծայրուկ առաջ. «Իսկ ամենից ծիծաղելիս այն կլինի, եթե պարզվի, որ ահա այդպիսի դեմքով ծերունին պոռնոգրաֆիկ նկարներ է նայում...»։ «Մարսափելի է, — ծիծաղելով առաջի ես։ — Եվ ամենաապրափելին այն է, որ դա միանգամայն հնարավոր է...»։ Ա՛խ, թող նա կարդա՝ ինչ ուզում է, բայց հենց այն պատճառով, որ մենք կարող ենք այդպիսի բաներ մտածել նրա մասին, մենք երբեք այդպիսի դեմք չենք ունենա...

Եվ այդ պահին մենք հասանք նպատակին, որ դեռևս անընթերցելի էր ինձ համար։ Ժայռի մեջ փորված նեղ մուտքը ինձ հիշեցրեց մուտքերը հին աղոթատների, որոնք հենց նոր էին դատարկվել հավատացյալներից։ Լոկլայն ինձ առաջ թողեցին, և ես մտա քարանձավի խավար...

Ա՛խ, փոքրիկ չարանձիկներ էինք մենք...

Գ ա գ ա թ ը

Գա էլ հենց Գեղարդն էր։

...Ես կենտրոնում կանգնած, գլուխս վեր էի պարզել։ Այդտեղ, իմ գլխավերևում, մի կապույտ, կլոր շրջանակ կար և յուրք հենց այնտեղից էր ընկնում։ Այնտեղ երկինքն էր, «ՆԱ այնտեղից է սկսել... Այդ անցքից նա փորել է ամբողջ տաճարը» — մանկան շշուկով առաջ ինձ քարեկամս։ Եվ թեկուզ ես խոր ներքևում էի կանգնած, մինչև հիմա էլ, ներքին հայացքով այդ տաճարը տեսնում եմ վերից վար, ինչպես, հավանաբար, ՆԱ է տեսել՝ այնտեղ, ժայռի վրա կանգնած, երբ տաճարը դեռևս չի եղել նրա ոտների տակ...

Կապույտ շրջանակից, աստիճանաբար լայնանալով, իջնում է թառած կամարը և հասնելով կիսաշրջանին, կտրվում է ու կախվում ձեր գլխին՝ կատարյալ շրջանագծի ձևով։ Կիսաշրջանի շրջափողի ուղղությամբ իջնում են չորս պուներ և խոր ներքևում, հասնելով ինձ, կորչում այն սալի մեջ, որի վրա ես կանգնած եմ։ Կամարը նկոյում է, հենված չորս պուների՝ ալնքա՛ն գեղակերտ ու կատարյալ, որ ես, մասնագիտական գիտելիքներ չունենալով, հրաժարվում եմ նկարագրել։ Կամարի ներքին պոկից, շրջանագծի յուրաքանչյուր քառորդ մասից, չորս կողմի վրա, չորս կլորավուն ծաղկաթերթի նման ընդլայնվում է տաճարի դատարկ մարմինը։ Այնտեղ արդեն՝ կենտրոնից հեռու ընկած ծայրերում, պատերը ուղիղ գծով կախվում են, չորս ծաղկաթերթ պոկեցվելով հիմքի վրա, որտեղ ես կանգնած եմ։ Դարձյալ նույն հալկական խաչ-ծաղիկ...

Պատի աղեղները կորչում են աղջամուղջի մեջ, պուները վեր խոյանալով խառնվում էին կամարին, որի կատարից ինձ էր նայում երկնքի կապույտ, կլոր աչքը։ Եվ այդ ամբողջ ժայռի մեջ էր, մի ամբողջական քարից։ Ձևերը այնքա՛ն ներդաշնակ են, միա՛կ ու բացարձա՛կ։ Այդպիսի կատարելություն երբեք չէի տեսել և չեմ տեսնի։ «Համարեղ» քառը ցածր է հնչում՝ որոշելու համար այն, ինչ ես տեսա։

ՆԱ... ահա այն անցքից... վերից վար փորել է... այս ամբողջ տաճարը։ Ո՞վ է ՆԱ։ Անունը չկա և չի էլ կարող լինել, թեև նա մեծակ է եղել։ Աստված է։ Աստված՝ այդ անանուն մարդու մեջ, ժայռից հանել է ավելորդ քարը և մնացել է տաճարը։ Նա հավատացյալ մարդ է եղել, Աստծու պես հավատացյալ։ Հավատից քացի ուրիշ ոչինչ չի կարող ստեղծել այսպիսի բան։ Անհավատը չէր կարող, ֆանատիկոսը կկոտորվեր։ Մարդկային հավատի հրաշք՝ ահա թե ինչ է Գեղարդը։

Տաճարում ոչ մի ամրակ չկա։

Տաճարն արդեն եղել է այդ ժայռի մեջ, անհրաժեշտ էր միայն փչել-հանել այնտեղից քարը... Ոչ մի մեքենա չէր կարող անել այդ բանը։ Միայն ձեռքերով, միայն եղունգներով կարելի էր հատիկ առ հատիկ ճանկնել-փորել այդ տաճարը։ Ոչ մի սխալ, ոչ մի ճար չէր կարող լինել այդ ժայռում, որովհետև այնտեղ տաճար կար։ Ոչ մի գծագիր, ոչ մի հատակագիծ, որովհետև այնտեղ հենց այդ տաճարն էր, այդ ձևերը և այդ եզրագծերը։ ՆԱ հավատում էր այդ միակին, տեսնում այդ միակը. ահա և բոլորը։ Նա կարող էր և չաղոթել, և չգնալ եկեղեցի, և չիմանալ Աստծո խոսքը. նրա մեջ Աստված կար։ Նա հատակագիծ չունեի, գծագրեր

չունենք: ՆԱ իր ուղեղի մեջ այնպիսի ազնիվ և անաղարտ կամարներ ունեն, որ դրանք բերեց այստեղ, և ոչ մի սխալ չէր կարող լինել: Նրա ուղեղը դարձավ ապագա տաճարի պատկերն ու նմանությունը, իսկ տաճարը՝ Աստծո պատկերն էր:

Այդ հիմա է, որ ես դիմում եմ թվապես բառերի տրամաբանությանը. ուրիշ էլք չունեմ: Իսկ այն ժամանակ ես բառեր չունեի և չէի կարող ունենալ և չպետք է ունենայի. ես չկայի: Ես մտնում էի **ճրան**. Ույն համընթացությունը, ույն հավատն էր ապրում իմ մեջ, որովհետև ես ամփոփվել էի նրա ազնիվ ու անաղարտ ուղեղում, նրա հավատի մեջ, նրա ամբողջական ու եզակի մտքի մեջ, որտեղ ուրիշ այլ միտք արդեն չէր կարող գոյություն ունենալ: Դա ՆՐԱ անմահությունն էր:

Բայց մեր անկատար հոգին երկար չէր կարող դիմանալ դրան: Մենք վերջապես իրար նայեցինք: Եվ իմ բարեկամները հիշելով, որ ինձ՝ որպես հյուրի, պետք է ցույց տալ **բոլորը**, խորհրդավոր կերպով ցրվեցին տարբեր կողմերի վրա, ինձ թողնելով կենտրոնում, և կանգ առան յուրաքանչյուրը մի պլան մոտ: Եվ սկսեցին երգել: Դա մի հիմ հայկական մեղեդի էր, դանդաղ ու թախծոտ: Նրանց ձայները բազմապատիկ արձագանքվում էին, և ամբողջ ժայռն էր դողանջում զանգի պես: Մենք հենց քարե զանգի մեջ էինք, նրա զանգույակներն էինք: Եվ այս բազմաձայնությունը մուլեթան բնականոն էր ու ներդաշնակ, որքան և տաճարի գծերը, և այլ կերպ չէր էլ կարող լինել: Այստեղ և՛ գիծը, և՛ հնչյունը ենթարկվում էին մուլեթ օրենքին... Մի՞թե մեր ճյուղավորված գիտելիքները այն եզակի, միակ օրենքի իմացության կորուստն չեն: Երբ չկա այդ օրենքը, արդեն վերջ. ճարտարապետություն, գծագրեր, կանոններ, հաշվարկներ, ֆիզիկա, ակուստիկա, մեքենաներ... Մեր կորցրած միակ ու ամբողջական օրենքի փլատակների մրջնային կատարելագործություն...

Երգը գեղեցիկ էր, բայց երգից հետո մենք արդեն կարող էինք անմիջական ծանրաբեռնվածությունից հոգնած մեր հոգիները դուրս բերել Աստծո լույս:

...Ոչնչով չխախտված, սովորական, պարզ ու հասարակ ժայռ: Եվ մուլեթային եկեղեցի, արտաքինից՝ եկեղեցու աշխարհիկ մարմին... Բայց երբ աչքերս բարձրացրի և տեսա գեղեցիկ այն ժայռերը, որ այնպես խրատաշունչ վեր էին խոյանում և ալմտեղ՝ կապույտի մեջ քարանում պաքաձև, ինձ վերստին զարմանք պատճառեց այդ մուլեթ մեծ նմանությունը: Այժմ դա հետադարձ էր: Այժմ այդ ժայռերն էին նման տաճարին, որից ես

նոր էի դուրս եկել: Տաճարը ավելի նախաստեղծ էր, քան բնությունը, և այժմ բնությունն էր նմանակվում նրան: Այդ ամբողջ հրաշալի վայրը և երկինքը նման էին հենց նոր իմ տեսած արարչագործությանը և հենց արարչագործությունն էր, որ կար:

Այստեղ ամեն, ամեն ինչ, բոլորը արտացոլվելով, կրկնում էին միմյանց. հաստատելով գոյող ձևերի ներդաշնակությունն ու միասնությունը, և երբ մենք փորձեցինք պարզել, թե ինչո՞ւմն է այդ միասնությունը, մեր հայացքը սողաց դեպի վեր, դեպի վեր, որպեսզի կանգ առնի ինչ-որ բանի վրա, որպես նմանության կենտրոնի, և ոչ մի տեղ չկարողացավ կանգ առնել ու մենք այլևս նայելու տեղ չունեինք, երկնքից բացի...

Այս տաճարում ժամասացությունը երբեք չի դադարել, յուրաքանչյուր քարի վրա կարելի է մոմ վառել:

Փ ա խ ո ռ տ

Մենք էլի բարձրացանք, և ես արդեն ավելի շուտ երկրորդականում, քան սրտի թրթիռով, նայեցի այն կապույտ անցքից, որտեղից ՆԱ սկսել էր... Սև, համր փուս էր: «Ահա թե ինչու,—ասաց բարեկամս, ուսիս վրայով դիտելով այդ անցքը,—ահա թե ինչու ես այդքան հազվադեպ եմ լինում այստեղ... Դու չլինեիր, չէի գա... Այստեղից ինչպե՞ս վերադառնալ, ինչպե՞ս նորից գնալ այն մուլեթ...»: Եվ մենք սահուն ու թեթև կորագծով արագորեն ներքև իջանք, ավելի ու ավելի ուժեղ զգալով մեր սին հոգնածությունը:

Բակում մի «Վոլգա» էր կանգնած (երբ մենք բարձրանում էինք, չկար), վարորդը գնում էր շարժիչը, իսկ նրա կողքին, քարի վրա նստել էր այն գեղեցիկ ծերունին, որին մենք տեսել էինք պատշգամբում, գիրքը ձեռքին... Սև փարաջայի քղանցքը փովել էր գետնին, թաքցնելով նրա ոտքերը: Ես ծերունուն տեսա մոտիկից, կարող էի ձեռքով դիպչել նրան: Մենք չէինք սխալվել, նրա դեմքը, իրոք, փառավոր էր: Նա գնում էր ավտոմեքենայի մոմը՝ մատների ծայրով աչքի առաջ պահած: Նրա դաստակը մուլեթան ոգեշունչ էր, որքան և դեմքը: Նա այնպես էր դիտում մոմը, ինչպես այն ժամանակ գիրքն էր մայում. մուլեթային անշարժ, մուլեթ աստվածային, աշխարհիկությունից գերծ, հասարակ վեհություն: Նրա կույրերը փոքր-ինչ իջած էին, բայց ճակատը՝ մաքուր, մարմարե, անխտով էր ու նյարդային, ինչպես աչքի կոպ: Օ՛, մենք ճիշտ չէինք: Գիրք չկար: Մոմ չկար: Արդեն այլևս ոչինչ չկար:

Ներքևում, գետափին փողփողում էր այն մուլեթ կարմիր շրջագգետոր, մի քարակ.

կապտագորշ ծովս էր ելնում, և մենք առնում էինք խորովածի նուրբ հոտը, հասկանալով, որ ոչ թե աղոթքը, այլ քաղցն է կեղեքում մեզ. «Էհ,—ասաց մեր վարորդը,— մի շիշ օղի լինեք, հիմա կիջնեինք, կմիանայինք խորոված անողներին...»:

Ի՛նչ արագ, ի՛նչ հապճեպ պոկվեց մեքենան, դուրս տանելով մեզ Գեղարդից: Ոչ ոք էտ չնայեց: Երբ ներս ես մտնում, ամեն ինչ բացվում է քո առջև, իսկ երբ հեռանում ես, միայն վերադարձի ճանապարհն ես տեսնում: Մենք դուրս պրծանք առյուծի թափի տակից:

Իսկ հետո, իսկ հետո մեզ միայն ուրախություններ էին սպասում: Գնալով, մենք ավելի թեթևանում, ավելի սովածանում էինք: Մենք կանգ էինք առնում՝ գետակից ջուր խմում, մենք կանգ էինք առնում՝ խորոված ուտում և օղի խմում ու, վերջապես, արևամուտին հասանք Գառնի: Գառնին միակ հեթանոսական տաճարն է մեր Միության մեջ: Ավերված է: Գառնին հրաշալի է:

Բաց այստեղ կարելի է նստել, խմել, երգել, պարել: Դա հեթանոսական տաճար էր: Մենք կիկլոպյան բեկորների վրա նստած, ճաճա էինք խմում, որ վերցրել էինք տաճարի պահակից, կատակում էինք, եթե կարելի է այդպես ասել, լեհ տուրիստների հետ, աչքով էինք անում, հոհոում էինք, քրքջում, սրախտում... Մենք դիտեցինք զարմանահրաշ մայրամուտը, և խավարը սկսեց թանձրանալ կիրճում:

Վերջապես, մենք ճամփա ընկանք Երեվան՝ ուրախ, գինովցած, երջանիկ, ամեն ինչ թողած ետևում և չնկատելով անցումները: Մութն արդեն ընկել էր, վարորդը ճարպկորեն աջ ու ձախ էր դարձնում դեկը, մեքենայի լույսի մեջ ճախրում էին արծաթափայլ թիթեռները, իսկ ետևում քարեկամներս հրաշալի երգում էին իրենց հրաշալի երգերը, և ես՝ քնքշացած, քիչ էր մնում ձայնակցեի նրանց՝ մայրենի հայերենով: Առջևում երևացին Երևանի լույսերը:

